ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 652-Ա

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՏՕՐԻՆՈՒԹՅԱՆ2022Թ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 11.02.2022թ. թիվ 058-Ն որոշման 8-րդ կետով, հիմք ընդունելով «Բարեկարգում» տնօրինության տնօրեն Ա.Հարությունյանի 13.07.2022թ-ի թիվ 3757 զեկուցագիրը՝

Որոշում եմ

1. «Բարեկարգում» տնօրինության 05 բաժնի 1 խմբի 1դասի «Աղբահանություն» ծրագրի ծախսերի «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» 4111 հոդվածից պակասեցնել 4000,0 հազար դրամ և ավելացնել «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» 4112 հոդվածին 4000,0 հազար դրամ՝ Արմավիր համայնքի տարածքում մեծամաշտաբ աղբահանության և կանաչապատման աշխատանքները բարեխիղճ կատարելու համար տեղամասի աշխատակիցներին պարգևատրելու համար:

2.Արմավիր համայնքի 2022թ բյուջեում և «Բարեկարգում» տնօրինության ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2022 թ. հուլիսի 13
ք. Արմավիր